

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՓԱՌՔ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՔՈ, ՏԵՐ

Քրիստոնյա ողջ մարդկությունը ևս մեկ անգամ ողջունեց Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը, ավետիս, որը մարդկությանը պարգևում է ճշմարտությամբ հաղթանակելու ոգի:

Թափուր մնացած գերեզմանի եղելությունը դարձավ կյանքը հարության շնչով ապրելու իրողություն:

Հրեշտակի ավետիսը զգաստացնող բարբառով ազդարարեց առաջին վկաներին. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5):

Հարյա՜վ...

Քրիստոս հարություն առավ և Իր հարությամբ մեզ նոր կյանք պարգևվեց:

Հարության զորությունը մարդկությանը նոր ոգի տվեց, առանց այդ հարության չկա՛ քրիստոնեական քարոզչություն, և առանց այդ հարության ընդունայն է ամենայն հավատք:

Հիշենք Պողոս առաքյալի աստվածաշունչ խոսքերը. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ՝ ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատքըն ձեր» (Ա. Կորնթ. ԺԵ 14):

Որքան գեղեցիկ է հավատքի սերը, որն այսօր հնչեցնում է ավետիսը լուսապայծառ հարության:

— Փա՜ռք Քրիստոսի ամենազոր հարության:

Փառք նրա անմահարար խորհրդին, որ ողջ մարդկությանն օծեց զվարթարար տեսությամբ, այն է՝ ապրել կյանքը հարության հաղթանակի ոգով:

Նորոգված հարության շնչով և գոտեպնդված ավետարանի առաջին վկաների հավատքով, հրեշտակի քաղցր բարբառը հնչում է կրկին.

«Չէ աստ, այլ յարեաւ»:

Մահվամբ մահը հաղթած Քրիստոսի կենսագործող լուսափայլ հարության շունչը վերստին խնկում է ողջ տիեզերքը՝ բոլորին պարգևելով կյանքը ապրելու քրիստոնեական սեր, մահից չսոսկալու հավատք և անմահության ձգտող հույս:

Այսօր, հարության պայծառ այս տոնին, մենք մեզ զգում ենք հաղթող ու հզոր՝ խավարային բոլոր ուժերի դիմաց: Զարդարված Քրիստոսի նորափետուր հարության պատմությանով, չենք սոսկում ո՛չ չարից և ո՛չ էլ դժոխքից, այլ վերստին հիշում ենք առաքյալի աստվածաշունչ խոսքերը. «Ո՞ր է, մահ, քո տանջանքը, ո՞ւր է, դժոխք, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Քրիստոսի հարությունը դարձավ կյանքի զորությունը:

Քրիստոնեական հավատքով լուսավորված յուրաքանչյուր մարդ ընդունում է ճանաչել նրան «և նրա հարության զորությունը» (Փիլիպ. Գ 10):

Այդ զորությունն է քրիստոնյային՝ կյանքի ճանապարհ:

Այդ զորությունն է քրիստոնյային՝ հավատքի աղբյուր:

Այդ զորությունն է քրիստոնյային՝ անմահության հույս:

Մեր հայրերի դավանած հավատքով ողջունենք ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԸ՝ հեռնելով Քրիստոսի կենդանարար պատգամին. «Ես իսկ եմ հարություն և կյանք, ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի, և ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25—26):

Եվ երգենք անվերջ Հարության տեսիլքով.

«—Փառք յարութեան քո Տէր.
Ես ոչ դադարեցայց օրհնել զՔեզ
Զամենայն աւուրս կենդանութեան իմոյ»: